

ՏԵՂԵԿԱՆՔ

2021 թվականի առաջին կիսամյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և մարզպետարանից առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2021 թվականի առաջին կիսամյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 6203 թղթակցություն, առաքվել՝ 4935 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ ազգային ժողովից՝ 11, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 165, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 705, հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 675, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 1334, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 1978, գաղտնի թղթակցություն՝ 45. քաղաքացիներից՝ 1290 դիմում:

ՀՀ Սյունիքի մարզպետարան է հասցեագրվել 96 դիմում, որից՝ ՀՀ ազգային ժողովից՝ 4, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 56, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 25, հանրապետական գործադիր մարմիններից՝ 11:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը.

Ամսական մեկ անգամ մարզկենտրոնում կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ:

2021 թ. առաջին կիսամյակում կատարվել է 255 քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպում են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Քաղաքացիների ընդունելության մասին տեղեկատվությունը ամենամսյա պարբերականությամբ ներկայացվում է նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: